ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ N 1400-Ա ՀՐԱՄԱՆԸ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 1400-Ա
Տիպ	Հրաման
Ակտի տիպ	Հիմնական ակտ (16.09.2009-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀԳՏ 2009.10.14/27(345).1 Հատուկ բաժին
Ընդունող մարմին	Առողջապահության նախարար
Ընդունման ամսաթիվ	15.09.2009
Ստորագրող մարմին	Առողջապահության նախարար
Ստորագրման ամսաթիվ	15.09.2009
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	16.09.2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

15 սեպտեմբերի 2009 թ. N 1400-Ա
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

«ՏԱՐՄԻԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները և 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Տարմիար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 27.08.2009թ. N 9750 դիմումը.

Հրամայում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել «Տարմիար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2005 թվականի մայիսի 25-ին տրված դեղատնային գործունեության (դեղատնային կրպակ) թիվ Կ-XX-000679 լիցենզիայի գործողությունը:
2. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի լիցենզավորման բաժնի պետի ժ/պ Մ. Կարապետյանին՝
1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկությունների գրանցումը համապատասխան գրանցամատյանում.
2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը դիմողին, գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմին և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե.
3) սահմանել, որ «Տարմիար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2005 թվականի մայիսի 25-ին տրված դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ) թիվ Կ-XX-000679 լիցենզիան չի կցվում անհատական գործին՝ լիցենզիայի կորստյան պատճառով (հիմք՝ «Վանաձորյան Խճանկար» 21.01.2009 թ. շաբաթաթերթում տրված հայտարարությունը):
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Ա. Ղուկասյանին:

Նախարար **Հ. Քուշկյան**